Սովորողների մեջ ինքնուրույնության նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը Միսաք Մեծարենցի պոեզիայի դասավանդման ընթացքում

Հետազոտական աշխատանք

Հեղինակ՝ Աստղիկ Մխիթարյան

(Երևանի թիվ 189 ավագ դպրոցի ուսուցչուհի)

Ղեկավար՝ Անուշ Աբելյան

Երևան – 2022թ.

Բովանդակություն

1.Ներածություն

2.Թեմա

3.Ամփոփում

4.Հղումներ

Ներածություն

Ժամանակակից կրթական գործընթացը կանխորոշում է սովորողների ազատ և ինքնուրույն մտածողության նախաձեռնողական հմտությունների կիրառում, որին պիտի նպաստի նրանց ստեղծագործական ունակությունների զարգացումը:

Ճուր չի ասված. մարդը չի կարող ազատ լինել, եթե ինքնուրույն չէ: Ինքնուրույն լինել ձգտում են բոլորը, առավել ևս՝ աշակերտները, որոնց համար ուսուցիչը ոչ միայն ավագ ընկեր է, այլև նպատակներին հասնելու ճանապարհին արդյունավետ ուսումնառության կազմակերպիչ: Չ՞է որ յուրաքանչյուր երեխա իրավունք ունի թռիչքի, որպեսզի հասնի իր երազին: Հաշվի առնելով երեխայի հմտությունները և կիրառելով արդյունավետ միջոցներ՝ ուսուցիչը պետք է սովորեցնի, որ աշակերտը դասապրոցեսի ընթացքում կարողանա ինքնուրույն մտածել և գործել՝ իբրև անհատ:

Աշակերտի ինքնուրույն մտածողությանը պետք է միտված լինի հատկապես գրականություն առարկան՝ ձևավորելով խոսք կազմելու կարողություն. բառապաշարի հարստացում, խոսքի պատկերավորության ընկալման հմտություն:

Գրականությունը խոսքի արվեստ է: Ուստի գրականության դասավանդման նպատակը պիտի լինի աշակերտին հաղորդակից դարձնելը խոսքի գեղագիտությանը , պատկերավոր խոսքի արվեստին:

Ուսուցիչը պիտի առաջնորդվի այն գիտակցությամբ, որ գրականությունը աշակերտի՝ իբրև մարդ-անհատի հոգեբանությունն ու ներաշխարհը բացահայտելու միջոց է, և պետք է ստեղծագործական արդյունավետ ու հետաքրքիր առաջադրանքների օգնությամբ կարողանա այնպես անել, որ վերջինս հասկանա բանաստեղծական խոսքի կարևորությունը և կյանքում այն կիրառելու հմտություններ ձեռք բերի:

Հայ գրականությունը, ունենալով բազմադարյան հարուստ ավանդույթներ, մեծ հնարավորություններ է տալիս ուսուցիչներին դասավանդման ընթացքում աշակերտների մեջ ձևավորելու արժեքային համակարգ, ստեղծելու հոգևոր արժեքներ հանուն հայրենիքի բարօրության, սերմանելու սեր հայրենիքի հանդեպ, հաստատելու մարդկային հարաբերություններ:

I մաս

Աշակերտների մեջ ինքնուրույնության նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը կարելի է խթանել Միսաք Մեծարենցի պոեզիայի դասավանդման՝ ծրագրով նախատեսված մի քանի ժամերի ընթացքում՝ կանխավ նախանշելով հետևյալ նպատակները.

- Ճանաչել բանաստեղծին՝ իբրև մարդ-անհատ, բացահայտել նրա կենսագրության էջերը.
- Ծանոթանալ Մ.Մեծարենցի պոեզիայի թեմատիկային, առանձնացնել դրանց ժանրային տեսակները.
- Ճանաչել և սովորել արևմտահայերենի քերականությունը և բառապաշարը.
- Սովորել վարժ և արտահայտիչ ընթերցել, նաև արտասանել Մ.Մեծարենցի բանաստեղծությունները.
- Բացահայտել հայրենի բնության, գիշերային պատկերների գեղեցկություններն ըստ Մ.Մեծարենցի պոզիայի.
- Արժևորել երիտասարդ բանաստեղծի հումանիզմը՝ «անանձնական սերը».
- Ըմբռնել վաղամեռիկ բանաստեղծի սիրո և կարոտի հույզերը, հոգու տառապանքն ու կենսասիրությունը.
- Համեմատել հայ գրականության երկու վաղամեռիկ բանաստեղծների՝ Պետրոս Դուրյանի և Միսաք Մեծարենցի կյանքն ու պոեզիան, բացահայտել նմանություններն ու տարբերությունները.
- Արժևորել Մ.Մեծարենցի պոեզիայի լեզվաոճական առանձնահատկությունները, խոսքարվեստի բացառիկ գեղեցկությունը.
- Պատրաստել սահիկաշար՝ զուգակցելով Մ.Մեծարենցի բանաստեղծությունների ընտրանին համապատասխան երաժշտության հետ.
- Կազմակերպես պոեզիայի ժամ (կամ գրական-երաժշտական դաս).

Դասի նպատակները ճիշտ իրագործելու դեպքում կպարզաբանվեն վերջնարդյունքները: Այն է՝

Աշակերտները պիտի՝

- Ճանաչեն Միսաք Մեծարենցի կարճատև կյանքի պատմությունը.

- Ծանոթանան Մ.Մեծարենցի պոեզիայի թեմատիկային, առանձնացնեն դրանց ժանրային տեսակները.
- Ճանաչեն և սովորեն արևմտահայերենի քերականությունը և բառապաշարը.

- Վարժ ու արտահայտիչ ընթերցեն, նաև արտասանեն Մ.Մեծարենցի բանաստեղծությունները.
-
- Բացահայտեն հայրենի բնության գեղեցկություններն ըստ Մ.Մեծարենցի պոեզիայի.
- Արժևորեն երիտասարդ բանաստեղծի հումանիզմը.
- Ըմբռնեն բանաստեղծի սիրո և կարոտի հույզերը, հոգու տառապանքն ու լավատեսությունը.
- Համեմատեն հայ գրականության երկու վաղամեռիկ բանաստեղծների՝ Պ.Դուրյանի և Մ.Մեծարենցի կյանքն ու պոեզիան, բացահայտեն նմանություններն ու տարբերությունները.
- Արժևորեն Մ.Մեծարենցի պոեզիայի լեզվաոճական առանձնահատկությունները, խոսքարվեստի գեղեցկությունները.
- Պատրաստեն սահիկաշար.
- Կազմակերպեն պոեզիայի, ասմունքի ժամ՝ զուգակցելով երաժշտության հետ.
- Կազմեն գեղարվեստական խոսք՝ գործածելով Մ.Մեծարենցի բառապաշարը:

Վերջնարդյունքի հասնելու համար ուսուցիչը, հաշվի առնելով սովորողների հմտություններն ու ունակությունները, նրանց ներուժի իրացման միջոցով և ստեղծագործական հետաքրքիր առաջադրանքների օգնությամբ կարող է հասնել լավագույն արդյունքի: Դրա համար ուսուցիչը դասավանդման ընթացքում պիտի խրախուսի աշակերտին՝ ասելով, որ նա կարող է սովորել, պիտի խրախուսի նրա ինքնուրույն մտքերը, թեկուզ դրանք լինեն սխալ կամ սուբյեկտիվ:

Մ.Մեծարենցի պոեզիայի ուսուցման և ուսումնառության ընթացքում կարելի է կրառել հետևյալ խաչվող (ընդհանրական) հասկացությունները՝ պատճառ և հետևանք, օրինաչափություն և պատահականություն, ժամանակ և տարածություն, անհատ և հարաբերություններ, մարդ և բնություն, իրականություն և երևակայություն, կյանք ու արվեստ:

II մաս

Միսաք Մեծարենցի պոեզիան հասկանալու համար անհրաժեշտ է ճանաչել նրա կյանքը, համոզմունքներն ու գրական հայացքները, փոխհարաբերությունները հասարակության հետ, ինչպես նաև իմանալ այլոց կարծիքները նրա մասին:

Արյուն է եղել աշխարհում: Եղել է եղեռն ու կռիվ,
Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամեհի ելած իրար դեմ:
Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ կտրած,
Արև է երգել ու գարուն, այս հիվանդ, հանճարեղ պատանին:

Եղիշե Չարենց

«Երբ մրսում եմ այս աշխարհում, մեծ պատանի, գրկում եմ քո երգերը, և ահա արևը, քո երգած արևը սուզվում է իմ ցուրտ հոգու մեջ կաթիլ առ կաթիլ»:

Վահան Թոթովենց

«Նա մեր մեջ նրբերանգելու, նրբազգացություններու շնորհալի բանաստեղծն է, բնության, լույսի ու ծաղկի, ծիածանային գույներու հիանալի նկարիչը»:

Դանիել Վարուժան

«Անիկա նկարիչ ծնած է: Ու անիկա զգացումները իբրև գույն տեսնելե ետք փափաքները, ներքին երևույթներն ալ իբրև գույն ցույց պիտի տա»:

Հակոբ Օշական

Եկար գունատ ու տրտում, աղոթեցիր ու անցար,
Եվ բուրումներ մնացին երիցուկի և ուրցի,
Ու ասես ցավն աշխարհում դարձավ աղոթք մի պայծառ,
Ու ասես մահն աշխարհում փոխվեց անմահ զրույցի...

Վահագն Դավթյան

Կյանքը



Միսաք Մեծարենցը ծնվել է 1886 թվականի հունվարին պատմական Հայաստանի Խարբերդ նահանգի Բինկյան գյուղում՝ Մեծատուրյանների ընտանիքում: Դեռևս մանկության տարիներին Միսաքը տարբերվում էր իր հասակակիցներից. Նա չէր սիրում աղմկոտ խաղեր, բազմամարդ հավաքներ: Մտածկոտ էր, ամաչկոտ, լռակյաց ու մեծասեր:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում: 1895թվականի կոտորածներից հետո, երբ հիմնովին քանդվել էր հայրենի գյուղը, տեղափոխվում է Սեբաստիա՝ եղբոր մոտ, շարունակում ուսումը: Դասերից դուրս ժամանակի մեծ մասը հատկացնում էր ընթերցումներին: Այնուհետև սովորում է Մարզվանի ամերիկյան քոլեջում: Ապա մեկնում է Կ.Պոլիս, սովորում Կեդրոնական վարժարանում:

Աշակերտական տարիներից գրել է բանաստեղծություններ, որոնցից մի քանիսը տպագրվել են «Մասիս» և «Ծաղիկ» հանդեսներում Սիրանուշ Պերպերյան ծածկանունով: Հետագայում տպագրվել է Շավասպ Ծիածան, ավելի ուշ՝ Միսաք Մեծարենց անվամբ: 1907թ. Պոլսում լույս են տեսնում նրա բանաստեղծությունների երկու ժողովածուները՝ «Ծիածան» և «Նոր տաղեր»:

Մ.Մեծարենցը գրել է նաև արձակ բանաստեղծություններ:

1924թ. Պոլսում վերահրատարակվել են Մ.Մեծարենցի երկերը՝ «Ծիածան և նոր տաղեր» խորագրով: 1908թ. Մ.Մեծարենցը կյանքից հեռացավ ճակատագրական մի չար դիպվածով ձեռք բերած հիվանդությունից՝ թոքախտից, ստեղծագործական թռիչքի պահին, երբ ընդամենը 22 տարեկան էր:

Ստեղծագործությունը

Մ.Մեծարենցի գրական ժառանգությունը բաղկացած է ավելի քան 130 քնարական ոտանավորից, շուրջ մեկ տասնյակ արձակ բանաստեղծությունից ու պատմվածքից և մի քանի գրական-քննադատական հոդվածներից («Ինքնադատության փորձ մը», «Նարեկացիին հետ»), որոնցում շարադրել է իր ստեղծագործական սկզբունքները, պաշտպանվել թշնամական քննադատությունից: Կատարել է նաև չարաժո թարգմանություններ եվրոպացի և ռուս բանաստեղծներից:

Մ.Մեծարենցի բանաստեղծական արվեստը շատ կողմերով կապված է դասական ռոմանտիզմի և սիմվոլիզմի հետ: Նա արևմտահայ պոեզիայում առաջ քաշեց բանաստեղծական պատկերի կառուցման նոր ձևեր, որոնք բնորոշ են արևելյան պոեզիային, ընդգծեց բառի փոխաբերական, մակդիրային իմաստը:

Մ.Մեծարենցն ունի բնության բացառիկ, խոր և բազմակողմանի զգացողություն: Բնությունը նրա համար ոչ թե պատկերի զարդանախշ է կամ նկարագրություն, այլ կենդանի խոսք, որ արտացոլվել և ապրում էր տպավորվող հոգում: Բանաստեղծն իրեն միշտ տեսնում է բնության հետ վերամիավորված: Այս առիթով նա ասել է. «Բանաստեղծը բնության ցոլացումը պետք է ըլլա. թե ոչ բանաստեղծ չէ իրապես. քերթվածները իբրը բառ պետք է ունենան տերևին թրթռումը, թռչունին դայլայլը, մարդերուն գորովը, դաշտին ու լեռան մշտանուն զորությունը»:

Այս ամենը հրաշալիորեն արտացոլված են շատ բանաստեղծություններում «Այգերգ», «Ձրտուք», «Աքասիաներուն շուքին տակ», «Արևին», «Մեղուներ», «Ձմրան պարզ գիշեր», որոնցում մեծարենցյան բնապաշտությունը փայլում է իր բոլոր նրբերանգներով:

Այգն է ծաղիկ երազով լի ու բալաձիգ՝ թեթևորեն,

Մշուշն անծալ ջրվեժին ամրարտակեն վար կը հոսի,

Իր չըփույթին մեջ կը շիկնի ոսկի աղջիկն արշալույսի,

Այգն է ծաղիկ երազով լի ու բալաձիգ թեթևորեն:

«Այգերգ»

Մեծարենցի լուսաբաղձ հոգու համար ևս բնությունը դյութական հանգրվան է, միայնակ մարդու լուռ ապրումների սպեղանի: Այն ներկայացված է պատանեկան մտածողությանը

բնորոշ փիլիսոփայությամբ:

Հարավի մեղմ ու լիաշունչ հովին հետ,
Որ վաղուց երազված համբույրի մը պես
Իմ սիրակարոտ հոգիս հեշտանքով կը լիացնե,
Շողա՛, ով արև, շառափներովդ ոսկեծայր,
Մառախլապատ Երկունքիս մեջ՝
Ուր մտածումը կը դեգերի ուղեմոլար,
Շողա՛, շողա՛, բարի՛ արև, հիվա՛նդ եմ…

«Արևին»

Բնապաշտությունը իր արմատներով կապված է Մեծարենցի մանկության, հայրենի ծննդավայրի հետ: Բնության կատարելության մեջ բանաստեղծը գտնում է հոգու ներքին տարերքի ազատությունը և պարփակվում արտաքին անբնական ու կեղծ վիճակներից: Այսպիսին է «Արևին» բանաստեղծությունը, որտեղ բնության ձայներն ու շարժումները, լույսերն ու գույները շատ հարազատ են պատանու հոգեկան ապրումներին:

Ճառագայթող գոլիդ մեջ հեշտագրգիռ
Մինչ կը խժա տարօրինակ, խոլ պարը զամբուռներուն՝
Հուրքեդ գինովցած,
Ու մինչ թուփ ու ծաղիկ ծարավեն կը մարմրին,
Ես կըմբոշխնեմ խտղտանքն անանուն՝ երջանիկ տիվանդորրիս

Համրորեն ու գիտակից գինովությամբ հեշտագին:
Վերջին անգա՛մ մըն ալ, դեռ իրիկու՛ն չեղած,

Ու դեռ տամուկ գիշերին վճուկը գիս չընգրկած,
Վերջին անգա՛մ մըն ալ,
Փարե՛ հոգվույս խանդաբորբ ու կաթոգի՛ն,
Հիվա՛նդ եմ, բարի՛ արև, շողա՛, շողա՛…

«Արևին»

Պարզ, լուսածածան, հրաշալի գիշերների երգը, երջանիկ տիվանդորրի, շափյուղազարդ երկինքների կախարդիչ հմայքը թափանցում են մարդկային հոգին՝ նրա հիվանդ ու ցաված անկյունները լցնելով ցնորքներով ու հույսերով:

Մեծարենցն իր հոգու ցավը երբեք չի դարձնում հիմնական ասելիք. այդ ցավը լուծվում, անէանում է կյանքի ու բնության հանդեպ տածած նա սիրո մեջ:

Գիշերը բանաստեղծի համար դառնում է խորհրդանիշ: Գիշերվա մեջ նա տեսնում է ոչ թե մռայլն ու խավարը, այլ կյանքի լույսը: Գիշերվա մեջ դադարում են ցերեկվա ժխորը, դառնությունները, մարդկային տառապանքը:Հանդարտվում ու մաքրվում է կարծես ամեն ինչ: Ողջ տիեզերքը լցվում է սիրով ու համբույրով: Երկիրը դառնում է լուսաճաճանչ, օծվում հաշիշով ու բալասանով: Ասես իրականանում են մարդկանց երջանկության ու սիրո երազանքները: Այս առումով «Սիրերգ» բանաստեղծությունը գիշերերգության մի կատարյալ գլուխգործոց է:

Գիշերն անույշ է, գիշերն հեշտագին,
Հաշիշով օծուն ու բառասանով,
Լուսեղեն ճամփեն ես կանցնիմ գինով,
Գիշերն անույշ է, գիշերն հեշտագին…

Համբույրներ կուգան հովեն ու ծովեն,
Համբույր լույսեն, որ չորս դիս կը ծաղկի,

Այս գիշեր Տոն է հոգվույս՝ Կիրակի՜,
Համբույրներ կւ գան հովեն ու ծովեն…

Երազած, սակայն չգտած, չվայելած, անփոխադարձ սիրուց մաշվում է բանաստեղծի հոգու լույսը և ցուրտ ու խավար աշխարհում սպառվում:

Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կըմաշի,
Շրթունքս են ծարավ միակ համբույրին,
Ցնծագին գիշերն է լույս ու լուսին,
Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կը մաշի…

«Աքասիաներու շուքին տակ» սոնետը բնության կախարդական, մեղմանուշ համանվագ է ասես՝ հոգիները վեհացնող ու հուզող, նրգահյուս լույսի շղարշներով, ստվերներով հագեցած բնապատկեր:

Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե
Բուրումներով օծուն հովիկն իրիկվան,
Հոգիներուն կ իջնե երազ մը բուրյան,
Ի՜նչ հեշտին է մթնշաղն այս սատափե…

Թվում է՝ հնչում է միջնադարից մի մեղեդի, և մարմնավորվում, շնչավորվում են բուրումներով օծուն հովիկը,լույսից ու տապից արբեցած, նորահարսի պես ճերմակ հագած ակացիաները, ձյան փաթիլների պես մեղմորեն վար իջնող ծաղկաթերթերը, մանկան արցունքի պես վճիտ ջուրը:

Աքասիաներ, գինով լույսե տապե,
Օրորվելով մաքուր շունչ մը կը հևան,
Մինչ կը ձյունե ծաղիկն իրենց հոտևան,
Չոր խոլաբար հովը գրկել կը շտապե…

Աշխարհը լցվում է երազային գույների ու նվագի կախարդանքով, դառնում թովիչ մի հեքիաթ, ու մարդը մաքրվում, ազնվանում է: Մեծարենցի գրչի տակ իրերն ու առարկաները ոգի են առնում, շնչավորվում որպես բարի, հարազատ, քնքուշ ու բանաստեղծական էակներ: Այս առումով ուշադրություն են գրավում մակդիր-որոշչային արտահայտությունները՝ որպես պատկեր-խորհրդանիշեր:

Տենչանքներս, տարագնացի՜կ մեղուներ,
Ոսկի երիզ մը բանալով
Ու զանակներ անձրևեղեն
Թռան գացին երամ-երամ,
Անցան գացին դարուղիեն,
Կիսաթափանց մշուշներու ապրշում քողը պատռելեն,
Եվ հածելեն մեջն արևին ոսկեծաղիկ մառախուղին:

«Մեղուներ»

Մեծարենցի պոեզիայում բնության պատկերները շատ հստակ են, ցայտուն, ունեն ճանաչողական արժեք: Բնությունն այստեղ անշունչ, մեռած տարր չէ, այլ կենդանի, բաբախուն, բազմերանգ մի երևույթ՝ հավերժ շարժման մեջ:

Պատուհանս մատնահարեց ու անցավ
Հովն հերարձակ աշունին,
Չարաճճի, ինչպես աղջիկ մը, ինչպես
Խաղընկեր մը՝ դրան ետին մոռցված...

«Հովը»

Հավերժական շարժման մեջ են ծառն ու ծաղիկը, ջուրն ու զեփյուռը, որոնց հետ այնպե՛ս մտերմիկ ու հարազատորեն եղբայրանում է պատանի բանաստեղծը: Նրա ստեղծագործություններն ընթերցելիս, թվում է, քեզ զգում ես բնության գրկում, փոխվում է սովորական տրամադրությունը, լսում ես ծովի ալիքների ծփանքը, ծաղիկների շրշյունը, հովի շունչն ու շատրվանի կարկաչը, քամու չարաճճի ծիծաղը պատուհանից այն կողմ: Բանաստեղծի ժամանակակիցները պատմում են, որ բնության գրկում անցկացրած ամեն մի օր դառնում էր անմիջական տարավորությունից ծնված մի ստեղծագործության աղբյուր: Ահա այսպես է ծնվել նրա բանաստեղծության գլուխգործոցներից մեկը՝ «Անանուն» վերնագրով: Հերթական զբոսանքներից մեկի ժամանակ Միսաքը թեքվում է ճամփեզրին բուսած մի գողտրիկ ծաղկի կողմը, կռանում նրա վրա և մտերմորեն հարցնում. «Վայրի ծաղիկ, անունդ ի՞նչ է»:

Վայրի՜ ծաղիկ, անունդ ի՞նչ է,
Ըսե՛, մասուր ու կանաչե
Ցանկապատին շուքին նստած
Վայրի՜ ծաղիկ, անունդ ի՞նչ է.
Ըսպիտակ, կաթ ու մազտաքե
Բուրող ծաղիկ, անունդ ի՞նչ է,
Ըսե, քիչ մը գեթ չե՞ս դողար,
Հովիկն անուշ երբոր փըչե...
Հպա՜րտ ծաղիկ, անունն ի՞նչ է
Պարիկին, որ անցավ քովեդ,
Հեզուկ ու սև սաթի վերվետ
Ցայտք մը ձգած իր քամակեն:
Գիտե՞ս, ծաղիկ, անունն ինչ է
Դողին, զոր քեզ տվավ հովիկ,
Ու ձայնին, որ զիս կը կանչե:

Մեծարենցյան քնարերգության այս կախարդական աշխարհում անսահման հրապուրիչ են այգն ու ցայգը, արևն ու վերջալույսը, օրվա բոլոր պահերը: Եվ այս կախարդական աշխարհի կենտրոնում մարդն է՝ բնության ստեղծագործ զավակը՝ իր անչափելի մեծ սիրով ու երազներով:

Հեղինակին հարազատ են հայ գյուղն ու գյուղացին, «հողին հակված» բարի մշակը: Մեծարենցը կարոտով է հիշում հայրենի Բինկյանի արևոտ անդաստանները, փառաբանում

հողի մշակի բարի վաստակը: Բանաստեղծական անկրկնելի գոհար է «Ըլլայի՜, ըլլայի՜» շարքը:

Այստեղ վեր է հառնում հայ մարդու հայրենասեր ոգին, դարերից եկող տոհմիկ առաքինությունն ու հումանիզմը: Նա ցանկանում է անմնացորդ, անանձնական սիրով նվիրվել բոլորին՝ խեղճին, տնանկին, հիվանդին, երազում է ճամփի վրա հյուղ լինել՝ մոլորվածին ապաստան տալու համար, ամոքել ու սփոփել վիշտ ու տառապանք ունեցողին:

Սա իրիկու՜նն ըլլայի ես,
Թույլ, նազենի, շղարշային, վարդաբույր,
Ու ծփայի զերթ ոսկեսար վարագույր
Վրան ամեն անցորդի:

«Իրիկունը»

Ջմեռներուն ես ամպավար հովն ըլլայի,
Եվ անճրագ խուղերու ճիչն հորձքիս ծուլած,
Անցորդներու հոգվույն վրա փշրվեր
Իբրև ալիք...

«Հովը»

Դաշտի ճամբու մը վրան
Կամ ստորոտը լերան
Ուղևորին ժամանման
Ըսպասող հյուղն ըլլայի:
Ու զգվանքիս կանչեի
Ես ճամբորդներն անժաման...

«Հյուղը»

Անգամ Աստծուն դիմելիս Մեծարենցը չի խնդրում ոչինչ իր անձի համար: «Տու՜ր ինծի, Տե՛ր» բանաստեղծության մեջ նա խնդրում է միայն անանձնական ուրախություն՝ աշխատող մարդու համար, տառապողի, դժբախտի ու վհատվածի համար:

Տու՜ր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
Ու բաղխեմ զայն սրտիս ժայռին՝ իբրև մական,
Որ բղխեցնե ջուրն աներկմիտ երանության.

Տու՜ր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական,
Ձայն ընդգրկած իդեալին ըլլամ սրսկան,
Ձայն լաստ ըրած ես Լույսերու նավորդն ըլլամ:

Սա մեր գրականության պատմության մեջ առաքինության լույսով օծված ուղի է, որ սկզբնավորել է դեռևս մեծն Նարեկացին, և որով անվարան քայլում է նաև Մ.Մեծարենցը: Սա երջանկության նոր բանաձև է, ուրիշին անանձնական սիրով նվիրվելու հոգեկան ձգտում:

Տու՜ր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական,
Ժողվել հոգվույն մեջ ծերերուն, կույսին, մանկան,
Պարզ մարդերուն՝ գեղջուկներուն ու բանվորին:

Սերը Մեծարենցի ստեղծագործություններում անբաժան է բնությունից: Բնությունը շնչում է սիրով, ամեն ծառ ու թուփ, հով ու ալիք սիրով են լցված, սեր են շշնջում, տիեզերքը ծովացած է սիրո կարոտով: Բնությունն է բանաստեղծի սիրո ներշնչման աղբյուրը:

Թույլ շրշյուն մը, ապա բույր մը մշկենի,
Եվ համրագին գիրքը ձեռքես կիյնա վար,
Երազներու պերճուհին է, որ կանցնի,
Ու կը փոթի ծովակն հոգվույս մեղմավար:
Ու կը փոթի ծովակն հոգվույս մեղմավար,
Եվ ալիք մը թևը բացած կը վազե՝
Գրկել ափունքն իղձիս ոսկի ավազե:
Ո՜վ պերճությունը գնացքին իր հպարտ,
Ճամբուն վրա՝ իր քայլերուն հետքը վարդ,
Ուր հեշտորեն կը հածի դեռ իմ մենիկ
Սիրտս՝ բո՜ց մը՝ մթնշաղին մեջ անհետ…

«Վայրկյան»

Իր հասակակից պատանիների նման երիտասարդ բանաստեղծն էլ երազում է արժանանալ գեղեցիկ ու նուրբ աղջկա ուշադրությանը, գեթ մեկ հայացքին, բռնել նրա ձեռքը: Անկատար սիրո տառապանքը խորացնում է հոգու ցավը, որն արտահայտվում է խորհրդանիշ-պատկերների միջոցով՝ ծաղկած քարեր, կարմիր սափոր, կակաչ ձեռք, բուրումնահեղձ

վարդեր, անհայտ սպասում, սիրո առու, տառապագին խավար, ցավոտ սեր:

Բոլոր լույսերն ալ մարեցան հետզհետե,
Ես կը սիրեմ այս խավարը տառապագին,
Ուր վիշտ մը լայն՝ սիրտս կուրծքես դուրս կը նետե,
Եվ ես կըմպեմ սև հեշտանքը ցավոտ Կյանքին:

«Նոպաները»

Առանձնահատուկ ու վեհաշունչ է մեծարենցյան թախիծը: Նրանում անսահման խորություն և պայծառություն կա, որ հասնում է մի զարմանալի լավատեսության: Այո՛, բնության նման բանաստեղծն էլ տոկուն է ու ամենաներո: Որքան խորն է սիրո կսկիծը, այնքան խորն է լավատեսությամբ ողողված հավատը. «Բայց սիրո հույս մը կարևե հոգիս…»:

Կսկիծ կա սրտիս մեջ վիրավոր,
Զոր արևին լույսն անգա չի բուժեր,
Խորունկ ու ցավոտ մորմոքում մը, որ
Ա՜խ, պիտի լայննա, երբ իջնե գիշեր…
Բայց դեռ կը հուզե զիս տեսիլք մը աղվոր,
Զոր ինձ կը բերեն անցյալին հուշեր:
Ու պիտի ապրի՜մ, վիշտը նոր ուժեր
Կը բերե հանկարծ հոգվույս սիրավեր,
Կյանքին կը դառնամ՝ դեռ չըրած գիշեր:
Փուշեր նետվեցան օրե օր վերքիս…
…Բայց սիրո հույս մը կարևե հոգիս:

«Վերադարձի երգ»

Հարուստ ու գունագեղ է Մ.Մեծարենցի բանաստեղծական լեզուն: Կարելի է ասել՝ բառերի նկարիչ է նա: Տեսանելի են սևով «նկարած» գիշերները, կապույտի մեջ թաթախված լույսի փնջերը, սադաֆե մթնշաղը, մանուշակագույն մշուշը, շոգոլիները ոսկեման, ծյունաճերմակ ակացիաները… Հազար ու մի կախարդական երանգ ունի հայոց բառը բանաստեղծի գրչի տակ: բայց դեռ չկա այն միակ տիեզերականը, որը պիտի արտահայտի նրա բարդ, հարուստ, երբեմն էլ հակասական ներաշխարհը: Իր արձակ

բանաստեղծություններից մեկում Մեծարենցը գրում է. «Այս իրիկնային համերգության մեջ

մեկնող արևին ոսկի գիրը, հեռավոր ծփուն կապույտ տառը, տերևներուն, թռչուններուն թռթռուն վանկը կը հեգեմ: Բայց չգտա դեռ անսահման բառը, որ դյութական բալլիքի պես պիտի բանար ինծի այս փակ դուռները՝ ճամփաներուն վրա, ծառերուն տակ, ամբոխին մեջ. անցորդները՝ ամենն ալ աներևութացան, ես տակավին մթնշաղին մեջ կսպասեմ: Ու, ըսե՛ք, ըսե՛ք ինծի գունագեղ, անսահման բառը՝ այս իրիկուն…»

Մեծարենցի պոեզիայում նրբորեն միահյուսված են բնության գեղեցիկ պատկերներն ու գեղարվեստական մտածողությունը՝ բանաստեղծական երևակայությունը:

Մեծարենցյան բառի մեջ կարելի է տեսնել նրա գեղարվեստական մտածողության բոլոր դրսևորումները: Բազմազան են են գրողի կիրառած պատկերավորման միջոցները, որոնք օգնում են հասնելու խոսքի գեղարվեստական հնչեղության և նկարագրվող առարկայի կամ երևույթի լիարժեք բացահայտման:

Առավել արտահայտիչ, զգացմունքային են մակդիր-որոշիչներն ու փոխաբերությունները, դրանք խոսում են պատանի բանաստեղծի բարդ, երբեմն էլ հակասական էության մասին: Ահա դրանցից մի քանիսը. սատափե մթնշաղ, հրաշեկ հոգի, լույսի անձրև, ճամփաներն իմ մտքին, ծաղիկ ծամեր, ծփանուտ երազիս աքունքեն, խանդոտ երազ, կապույտ մութ:

Պատանի բանաստեղծն ասես ընթերցողին տանում է բառերի խորքը՝ դրանց միջոցով ներկայացնելով գեղարվեստական պատկերների նորանոր ձևեր, միաժամանակ մեր գրականություն բերելով գեղարվեստական մտածողության նոր ճաշակ:

Եվ համբույր աննյութ, և համբույր անանց,
Վարդով գծգծված անհուպ շուրթերու
Կուսածին այգեր, փաղփուն լուսացանց:

«Սիրերգ»

Եվ ըղձակաթ իմ հեգ հոգիս
Ղզգաց սիրտիդ հուրքն արծարծուն,
Ու մետաքսե ուղի մը զիս
Սեր-Ծաղիկին տարավ ածուն:

«Երազ օրեր»

Բանաստեղծն ընթերցողի մեջ վեր է հանում նոր հոգեվիճակներ, նուրբ զգացողություններ, որոնք բառի փոխաբերական, մակդիրային կիրառման շնորհիվ

առարկայանում են, դառնում նյութական և շոշափելի:

Ոսկի շաղով օծեցիր
Կապույտ ծաղիկն ակերուն,
Լիճերու պորտը սարսռուն
Ու գետակներն ափնածիր:
Արև՜, մե՜զ ալ ոսկեզօծե, արև՜, մե՜զ ալ ա՜հ, մե՜զ ալ…

«Տերևները կըսեին»

Պիտի ըմպե՜մ բոցն արևին, ճառագայթի եմ ծարավի,
Պիտի ծըծեմ բույրն առտըվան, հոգվույս համար, որ հիվանդե…

«Այգերգ»

Հատկանշական է, որ Մեծարենցն ունի բանաստեղծություններ, որոնք ամբողջությամբ կառուցված են փոխաբերական հիմքով. ոչ մի բառ ու պատկեր ուղղակի իմաստով կիրառված չէ: Այս շարքին կարելի է դասել «Հով», «Սիրերգ», «Կապույտ հածումներ», «Արևին», «Մեղուներ», «Նավակներ» բանաստեղծությունները:

Նավակներ մեկնեցան ամենն ալ, բաղձանքով ակաղձուն,
Հեռացան ամենն ալ՝ ծփանուտ Երազիս ափունքեն.
Անձուկին բոցը զիս պաշարե՜ց Ղսպասման հիվա՜նդ եմ,
Հոգեսարս դողերով և հուրքով միշտ ցայգերն են հըղի.
Գիշերներն ես համբուն կը սպասեմ ծիրանի այն դարձին,
Ու ցայգուն ալ կանցնիմ ավազուտ ափունքեն դողահար՝
Սրտաթափ ու խանդոտ երազի կայծերով առլըցուն:
Դարձուցե՜ք նավակներս հողմավար, ջրանու՜յշ պայիկներ,
Դարձուցե՜ք նավակներս դյութավար, իրիկվա՜ն հովիկներ…

«Նավակներ»

Ամփոփում

Այո՛, գունագեղ ու անսահման է Միսաք Մեծարենցի բանաստեղծական աշխարհը՝ հարուստ պատկերավորման բազմազան միջոցներով: Նրա պոեզիան հայոց բազմադարյան գրականության անկողոպտելի ժառանգությունն է, իսկ խոսքի լեզվաոճական արվեստը՝ արևմտահայ գրական լեզվի կատարյալ, մաքրամաքուր դրսևորումներից մեկը: Ուստի հենց Մ.Մեծարենցի պոեզիայի միջոցով կարելի է օգնել աշակերտին ճանաչելու սեփական ներաշխարհը՝ իբրև մարդ-անհատ, հարստացնելու բառապաշարը, բացահայտելու գեղարվեստական խոսքի նրբերանգներն ու գեղեցկությունը, զարգացնելու ճաշակ, ձևավորելու գեղարվեստական ինքնուրույն մտածողություն:

Հղումներ

1.Թ.Ազարյան «Միսաք Մեծարենցի կյանքը», Կ.Պոլիս, 1922թ.

2.Հայ գրականության պատմություն, հ.5, 1978թ.

3.Մ. Մեծարենց, «բանաստեղծություններ», 1982թ.